

Հավելված

Հաստատված է
ՀՀ հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի
2005 թվականի մայիսի 31-ի
N 66-Ն որոշմամբ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման
(արտահանող-հաղորդող)

" _____ " _____ 200_ թվական _____ ք.

(ընկերության անվանումը)

այսուհետ՝ Պատվիրատու, ի դեմս _____

(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով,
Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով, մի կողմից, եւ

(ընկերության անվանումը)

այսուհետ՝ Կատարող, ի դեմս _____

(պաշտոնը, անունը, ազգանունը)

ղեկավարվելով ընկերության կանոնադրությամբ, գործունեության լիցենզիայով,
Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ այլ իրավական ակտերով, մյուս կողմից,
այսուհետ համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետեւյալի
մասին.

1. Պայմանագրում օգտագործված հասկացությունները

Հանձնաժողով՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողով.

Հաշվարկային ամիս՝ ժամանակահատված, որի գործողությունը սկսվում է
օրացուցային ամսվա առաջին օրվա ժամը 00.00-ին եւ ավարտվում է օրացուցային
ամսվա վերջին օրվա ժամը 24.00-ին.

Հաշվարկային կենտրոն՝ Էլեկտրաէներգետիկական շուկային հաշվարկային
կենտրոնի ծառայությունների մատուցման լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

Համակարգի օպերատոր՝ Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի
գործունեության լիցենզիա ունեցող իրավաբանական անձ.

Ֆորս մաժոր՝ արտակարգ եւ անկանխելի դեպքեր եւ հանգամանքներ, որոնք
ստեղծվել են Կողմերի կամօրհց անկախ, ներառյալ (սակայն չսահմանափակվելով
դրանցով) բնական աղետները, բնության ուժերի արտասովոր ուժեղ դրսեւորումները,
ինչպես, օրինակ, ջրհեղեղները, երկրաշարժերը, փոթորիկները, պտտահողմերը, նաեւ
սաբոտաժային գործողություններ, ահաբեկչություններ, պատերազմներ,
ապստամբություններ, հասարակական անկարգություններ, գործադուլներ, որոնք
խոչընդոտում են Կողմի գործունեությունը կամ հանգեցնում նրա ստանձնած
ցանկացած պարտավորության կատարման ձգձգման կամ դադարեցման՝ հակառակ նրա
կողմից գործադրված ջանքերի՝ խուսափելու, թուլացնելու կամ վերացնելու այդ

ուժերի ազդեցությունը:

2. Պայմանագրի առարկան

2.1. Կատարողը էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայություն է մատուցում Պատվիրատուին, իսկ Պատվիրատուն վճարում է հաղորդման ծառայության մատուցման համար՝ սույն պայմանագրով սահմանված կարգով:

3. Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության սակագները

3.1. Էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագինը սահմանում է Հանձնաժողովը: Հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագնի փոփոխման դեպքում նոր սակագինն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովի սահմանած ժամկետից:

4. Կողմերի պարտավորությունները

4.1. Կողմերը պարտավորվում են ղեկավարվել "Էներգետիկայի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ օրենքներով եւ իրավական ակտերով, գործունեության լիցենզիայով եւ սույն պայմանագրով:

4.2. Կատարողը պարտավորվում է.

ա) ապահովել Պատվիրատուի էլեկտրաէներգիայի հաղորդումը՝ իր սեփականությունը հանդիսացող հաղորդման ցանցով.

բ) ապահովել իր էլեկտրակայանքներում տեղադրված առելտրային հաշվառքի սարքերի սպասարկումը եւ պահպանումը (հավելված N 1):

գ) Պատվիրատուին եւ հաշվարկային կենտրոնին անհապաղ տեղեկացնել իր էլեկտրակայանքներում տեղադրված առելտրային հաշվառքի սարքերի խախտման (թերությունների հայտնաբերման) մասին եւ ապահովել հաշվառքի սարքերի վերականգնումը ոչ ուշ, քան 48 ժամվա ընթացքում: Նշված ժամանակահատվածում հաղորդված էլեկտրաէներգիայի քանակությունը հաշվառվում է Հանձնաժողովի 2004 թվականի սեպտեմբերի 16-ի N 110-Ն որոշմամբ հաստատված "էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգի" համաձայն:

դ) Պատվիրատուին եւ Համակարգի օպերատորին անմիջապես տեղեկացնել այն վթարների եւ էլեկտրակայանքների թերությունների մասին, որոնք հանգեցրել կամ կարող են հանգեցնել իր պայմանագրային պարտավորությունների չկատարմանը կամ ոչ պատշաճ կատարմանը.

ե) ապահովել Պատվիրատուի լիազոր ներկայացուցիչների մուտքը իր տնօրինության տակ գտնվող տարածքները՝ անհրաժեշտ զննումներ (ստուգումներ), այդ թվում առելտրային հաշվառքի սարքերի ստուգումներ կատարելու համար:

4.3. Պատվիրատուն պարտավորվում է.

ա) մինչեւ Հաշվարկային ամսվան նախորդող ամսի 20-ը Կատարողին ներկայացնել արտահանվող էլեկտրաէներգիայի (հզորության) բեռնվածքի օրական գրաֆիկը.

բ) վճարել Կատարողին իր սեփականությունը հանդիսացող էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության մատուցման համար՝ սույն պայմանագրով սահմանված կարգով:

(4.3-րդ կետը փոփ. 28.06.05 թիվ 88-Ն որոշում)

5. Էլեկտրաէներգիայի հաշվառում

5.1. Կատարողի հաղորդման էլեկտրական ցանց ընդունած եւ Պատվիրատուին հանձնված էլեկտրական էներգիայի հաշվառումն ու էլեկտրական էներգիայի փաստացի կորուստները հաշվարկում է Հաշվարկային կենտրոնը՝ վերջինիս ու Պատվիրատուի միջեւ կնքված պայմանագրի ու Հանձնաժողովի 2004 թվականի սեպտեմբերի 16-ի N 110-Ն որոշմամբ հաստատված "էլեկտրաէներգիայի (հզորության) հաշվառման կարգի" համաձայն:

6. Վճարման կարգը

6.1. Էլեկտրաէներգիայի ընդունման եւ հանձնման վերաբերյալ ակտը (հավելված N 2) ստորագրելուց հետո, մինչեւ Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի

15-ը, Կատարողն իր մատուցած ծառայությունների համար կազմում է հաշիվ-ապրանքագիր եւ ներկայացնում Պատվիրատուին:

6.2. Կատարողին իր մատուցած ծառայությունների համար վճարում է Պատվիրատուն՝ մինչեւ Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 25-ը:

6.3. Կատարողի մատուցած ծառայությունների համար վճարումներն իրականացվում են միայն դրամական միջոցներով:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1. Պայմանագրային պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում սույն պայմանագրով եւ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

7.2. Սույն պայմանագրի 6.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում Հաշվարկային ամսվան հաջորդող ամսի 30-ից Պատվիրատուն վճարում է տույժ՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար չվճարված գումարի 0.1 տոկոսի չափով: Ընդ որում, առաջնահերթության կարգով վճարվում է տույժը, ապա չվճարված գումարը:

8. Լրացուցիչ պայմաններ

8.1. Սույն պայմանագրում նշված առեւտրային եւ վերստուգիչ հաշվառքի սարքերի եւ դրանց միացման շղթաների ստուգումն ու կապարակնքումն իրականացնում է Հաշվարկային կենտրոնը՝ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:

9. Ֆորս մաժորային իրավիճակներ

9.1. Սույն պայմանագրի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դրանք ֆորս մաժորի հետեւանք են:

9.2. Կողմերը պարտավոր են ֆորս մաժորային իրավիճակների մասին անհապաղ տեղեկացնել միմյանց՝ նշելով դրանց հետեւանքների վերացման հնարավոր ժամկետները:

10. Տարածայնությունների լուծումը

10.1. Պայմանագրի առնչությամբ Կողմերի միջեւ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Հանձնաժողովի միջնորդությամբ՝ նրա կողմից սահմանված կարգով: Սույն պայմանը չի սահմանափակում Կողմերի իրավունքը՝ վեճերը լուծելու դատական կարգով:

10.2. Եթե տարածայնության առարկան Կատարողի կողմից իր մատուցած ծառայությունների համար ներկայացված հաշիվ-ապրանքագիրն է, ապա ցանկացած դեպքում Պատվիրատուն պարտավոր է ստորագրել այն եւ կատարել վճարումը, որից հետո միայն լուծել տարածայնությունը: Պատվիրատուն իրավունք ունի ստորագրած հաշիվ-ապրանքագրին կցել հատուկ կարծիք:

11. Այլ պայմաններ (կազմում են Կողմերը)

12. Պայմանագրի գործողության ժամկետը եւ փոփոխման կարգը

12.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցման պահից եւ գործում է մինչեւ 200__ թվականի _____-ը:

12.2. Պայմանագիրը կարող է փոփոխվել փոխադարձ համաձայնությամբ: Փոփոխված պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցման պահից:

12.3. Հանձնաժողովի կողմից էլեկտրաէներգիայի հաղորդման ծառայության

մատուցման (արտահանող-հաղորդող) պայմանագրի նոր օրինակելի ձեւ հաստատելու կամ գործող օրինակելի ձեւում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու դեպքում Կողմերը պարտավոր են Հանձնաժողովի սահմանած ժամկետում կնքել նոր պայմանագիր կամ համապատասխան փոփոխություններ կամ լրացումներ կատարել գործող պայմանագրերում՝ ներկայացնելով դրանք Հանձնաժողովի գրանցմանը: Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Հանձնաժողովում գրանցվելու պահից:

12.4. Պայմանագիրը կազմված է երեք օրինակից՝ մեկական Կատարողի, Պատվիրատուի եւ Հանձնաժողովի համար:

13. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելվածների ցանկը

Հավելված N 1՝ Էլեկտրատեղակայման հանձնման եւ ընդունման կետերի եւ առեւտրային ու վերստուգիչ հաշվառքի սարքերի ցանկ:
 Հավելված N 2՝ Էլեկտրատեղակայման ընդունման եւ հանձնման ակտ:

14. Կողմերի գտնվելու վայրը եւ հաշվարկային համարները՝

Պատվիրատու՝
 գտնվելու վայրը _____
 Հ/հ _____

Կատարող՝
 գտնվելու վայրը _____
 Հ/հ _____

Հեռախոս
 Ֆաքս
 Գործունեության լիցենզիա N
 Դեկավար

Հեռախոս
 Ֆաքս
 Գործունեության լիցենզիա N
 Դեկավար

(ստորագրություն, անուն, ազգանուն)

(ստորագրություն, անուն, ազգանուն)

Կ.Տ.

Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
 Գրանցված է "___" _____ 200 _____ թվական
 Գրանցման N _____ Կ.Տ.
 Պատասխանատու _____
 (ստորագրություն, անուն, ազգանուն)

Հավելված N 1
 Էլեկտրատեղակայման հաղորդման
 ծառայության մատուցման
 2005 թվականի մայիսի 31-ի
 N 66-Ն պայմանագրի

Էլեկտրատեղակայման հանձնման եւ ընդունման կետերի եւ առեւտրային ու վերստուգիչ հաշվառքի սարքերի ցանկ

1. Ընդունման կետ՝ _____

2. Հանձնման կետ՝ _____

2. Առեւտրային եւ վերստուգիչ հաշվառքի սարքերի ցանկ

N Ենթակայանի եւ	Հոսանքի	Լարման	Հաշվառքի	Հաշվառքի	Հաշվառքի
միացության	տր-որ	տր-րի	Գործակից	ձեւը	սարքի համար

կարգավարական անվանումը, լարումը	_____	փոխարկման (3x5)	_____	(առեւտրա- յին, վեր- ստուգիչ)	_____	պատասխանատու անձ	_____
1	2	3	4	5	6	7	8
1							
2							

Պատվիրատու

Կատարող

(պաշտոնը, անունը, ազգանունը,
ստորագրությունը)

(պաշտոնը, անունը, ազգանունը,
ստորագրությունը)

"__" _____ 200__ թվական

"__" _____ 200__ թվական

Կ.Տ.

Կ.Տ.

Համաձայնեցված է՝
ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

"__" _____ 200__ թվական

Կ.Տ.

Հավելված N 2
Էլեկտրատեղեկատվության հաղորդման
ծառայության մատուցման
2005 թվականի մայիսի 31-ի
N 66-Ն պայմանագրի

Էլեկտրատեղեկատվության ընդունման եւ հանձնման
ԱԿՏ

Հաշվարկային ժամանակաշրջանը՝ _____ թվականի "__"-ից մինչեւ _____
թվականի "__"-ը

N	Ցուցանիշներ	Չափման միավոր	Քանակ	Հիմքը	Ծանոթու- թյուն
1.	Առեւտրային հաշվառքի սարքերով հաշվառված էլեկտրատեղեկատվության քանակություն	կՎտժ			
2.	Հանձնված էլեկտրատեղեկատվություն	կՎտժ			
3.	Փաստացի կորուստները հաղորդման ցանցում	տոկոս			
4.	Ընդունված էլեկտրատեղեկատվություն	կՎտժ			

Պատվիրատու

Կատարող

(պաշտոնը, անունը, ազգանունը,
ստորագրությունը)

"__"_____200__թվական

Կ.Տ.

(պաշտոնը, անունը, ազգանունը,
ստորագրությունը)

"__"_____200__թվական

Կ.Տ.

Հաշվարկային կենտրոն

(պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը)

"__"_____200__թվական

Կ.Տ.